



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1876 ԱՄԻՆ

ՆԻՍ Ը.

13 ՕԳՈՍՏՈՍ 1876



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻՐԱՅԼԼԵԱՆ

1876

ՄԱՅԻ ԴԻՒԱՆ

| | | | |
|-------------------------|--------|----|----------|
| Ստեփան Արարանեան | Վարչա | Ա. | ԱՏԵՆԱՊԵՏ |
| Ստեփանեան | Էփեմար | Բ. | Ս |
| Տիգրան Արարանեան | Էփեմար | Գ. | Ս |
| Գարեգին Յ. Կարանեան | " | Ա. | ԱՏԵՆԱՊԵՏ |
| Համբարձում Խ. Արարանեան | " | Բ. | Ս |
| Աստուխ Արարանեան | " | Գ. | Ս |

ԶԵՆՆԱՅՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|-------------------------|--------|
| Տ. Յազաննէս Բ. Կարանեան | |
| Տ. Գրիգոր Բ. Արարանեան | |
| Սարգիս Արարանեան | Էփեմար |

ԳԱՏԻՍՄԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|--------------------|--------|
| Յազաննէս Արարանեան | Էփեմար |
| Գրիգոր Արարանեան | " |
| Պարտա Պարանեան | " |

ՊԱՍԻՍՏՐԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|--------------------|--------|
| Յազաննէս Արարանեան | Էփեմար |
| Ստեփան Պէլլիճեան | " |
| Յակոբ Կարանեան | " |

ՅԱՐԱՆԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|-------------------|--------|
| Տիգրան Արարանեան | Էփեմար |
| Օրմէն Խոստարանեան | " |
| Կարապետ Կարանեան | " |

ՀԱՄԱՐՄԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|---------------------|--------|
| Համբարձում Կարանեան | Էփեմար |
| Կարապետ Կարանեան | " |
| Յարութիւն Արարանեան | " |

ԻՐԱՍՄԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|------------------|--------|
| Տ. Արարանեան | Վարչա |
| Կարապետ Կարանեան | Էփեմար |
| Նշան Կարանեան | " |

ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|------------------|--------|
| Կարապետ Կարանեան | Էփեմար |
| Ստեփանեան | " |
| Աստուխ Արարանեան | " |

ԽՐԱՆԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | |
|------------------|--------|
| Կարապետ Կարանեան | Էփեմար |
| Պարտա Կարանեան | " |
| Ստեփան Պարանեան | " |

ԱՐԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1876 ԱՄԻՆ

ՆԻՍՏԸ.

13 ՕԳՈՍՏՈՍ 1876

ՆԱԽԱԶԱՆ. — Տ. ՄԱՏԹԷՈՍ ՍՐԲԱԶԱՆ (Ա. Բ. Գ. Ե. Զ.)
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԻՍՏՐԱՆ


ԱՐԿԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

| | | |
|---------------------------|---------------------------|--------------------------|
| ԱՆԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ | 22. Գրիգոր Արարանեան | Խոսիլուար Ս. Կարանեան |
| ԵՆԵՂԵՏԱԿԱՆՔ | 23. Խոսիլ Մանգարանեան | 49. Սիւրբ Պաշտօնական |
| 1. Խորէն Արարանեան | 24. Կարապետ Արարանեան | 50. Յովհաննէս Ճիւղեան |
| 2. Կարապետ Կարանեան | 25. Համբարձում Կարանեան | 51. Նիկողոս Արարանեան |
| 3. Մատթէոս Կարանեան | 26. Միսա Կարանեան | 52. Տրդատ Փարանեան |
| 4. Ամբրոսիոս Վ. Արարանեան | 27. Յովհաննէս Խոստարանեան | Բ. 3 |
| 5. Գարեգին Կարանեան | 28. Յովհաննէս Արարանեան | Բ. 3 |
| 6. Խորէն Կարանեան | 29. Յովհաննէս Արարանեան | Բ. 2 |
| 7. Հմանակ Կարանեան | 30. Ն. Սիւրբուրան Տարթոր | Բ. |
| 8. Յովհաննէս Փարանեան | 31. Պարտա Պարանեան | 53. Արմէն Ռեճեան |
| 9. Ներսէս Արարանեան | 32. Ստեփանեան | 54. Գրիգոր Արարանեան |
| 10. Պարտա Խոստարանեան | 33. Սարգիս Արարանեան | Բ. 2 |
| 11. Եղիշ Կարանեան | 34. Սահակ Արարանեան | 55. Մարտիրոս Յ. Տրիւնեան |
| 12. Արարանեան Վ. Մարանեան | 35. Աննայի Ստեփանեան | Բ. 2 |
| 13. Գրիգոր Արարանեան | 36. Փէլարմալեան Տարթոր | Բ. 2 |
| 14. Գրիգոր Արարանեան | 37. | 56. Ստեփան Կարանեան |
| 15. Խորէն Փէլարմալեան | (Բ. Վիճակ) | 57. Նշան Կարանեան |
| 16. Յարութիւն Արարանեան | Պէլարմալ | 58. Ստեփան Կարանեան |
| 17. Յովհաննէս Արարանեան | 38. Բարսեղ Հարանեան | Բ. |
| 18. Սարգիս Արարանեան | 39. Կարապետ Ա. Կարանեան | Բ. |
| 19. Սահակ Տ. Արարանեան | 40. Յարութիւն Մարանեան | Բ. 2 |
| 20. | ԷՆԵՂԵՏԱԿԱՆՔ | ԷՆԵՂԵՏԱԿԱՆՔ |
| | (Ա. Վիճակ) | 41. Խոստարան Կարանեան |
| | Գուճապարտ Կարանեան | 42. Կարապետ Գ. Փարանեան |
| | Գուճապարտի դուրս | 43. Մարտիրոս Տրիւնեան |
| 21. Գրիգոր Արարանեան | Բ. 2 | 44. |
| Բ. Կարանեան | Խոսիլուար Ս. Կարանեան | Բ. 2 |
| Բ. 2 Կարանեան | 45. Յովհաննէս Կարանեան | Բ. 2 |
| Բ. 2 Կարանեան | 46. Յովհաննէս Արարանեան | Բ. 2 |
| Բ. 2 Կարանեան | 47. Արարանեան | Բ. 2 |
| Բ. 2 Կարանեան | 48. Ստեփան Արարանեան | Բ. 2 |
| | | Խոսիլուար Ս. Կարանեան |
| | | (Գ. Վիճակ) |
| | | Գուճապարտ Կարանեան |
| | | Բ. 2 |
| | | 59. Յովհաննէս Արարանեան |
| | | Բ. 2 |
| | | 60. Ստեփան Արարանեան |
| | | Բ. 2 |

| ԳԱՆՈՒԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ | ԳԱՆՈՒԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ | ՄՈՂ |
|------------------------------|-----------------------------------|-----------------------------|
| 71. Կարապետ Շահապետ | Կարին | 121. Ստեփան Պ Պ. Փարապետյան |
| 72. Մկրտիչ Մարտիրոս | Բ. Պ 101. Մանուկ Սալանեան | Տիվրիկ |
| Կարապետ | Քեօրանեան | 122. |
| 73. Յակոբ Եղիշեան | 102 | Չկրան և Մարաշ |
| Եղիշեանի Ստանարիոյ | Սորիանուպոլիս | 123. |
| 74. Օգոստէ Խաչատրեան | Բ. 2 103. Ուրբէ Կր. Սր. Չեղրանեան | Տրապիզոն |
| Թօփղաթի | Նիկոմիդիա | 124. |
| 75. | 104. | Պարտատ |
| Էլույ Ս. Եղիս և Ս. Ստանարիոս | Ալե | 125. |
| 76. Գարեգին Յ. Մելիքեան | 105. Պետրոս Մկրտչեան | Տիգրանակերտ |
| Գորոս լիզմէ | Հարանիսար | 126. |
| 77. Աստուս Խնկարաշեան | 106. | Վան |
| Հասար և Պրյանի Գիւղ | Արարիկեր | 127. Սեմն Մարտիրոսեան |
| 78. Յովհաննէս Կոբեան | 107. Կարապետ Խաչիկեան | Ալարաւս |
| Կոր Գիւղ և Սրէնիս | Բաղէշ | 128. |
| 79. Դաւար Հովոսեան | 108 | Հալէպ և Այնթապ |
| Պարտատ | Պրոտա | 129. |
| 80. Աստուս Գուշատրեան | 109. Քրիստոստուր Դաւարանեան | Սիւրապոլիս |
| 81. Մկրտիչ Գ. Էստեան | Եղիշիս | 130. Մկրտիչ Մելիքեան |
| 82. Յովհաննէս Կրճիկեան | Բ. 110. Մեղքոն Հալանեան | Ուստուրի |
| Քարակեօմրիկ | Ամասիս | 131. |
| 83. Յարութիւն Չիճիրեան | 111. Համբարձում Ալանանեան | Կարս |
| 84. Յարութիւն Գ. Տատեան | Բարու | 132. Արթուր Ս. Ալազեան |
| (Ե. Վիճակ) | 112. Յովհաննէս Ալանորեան | Բ. 2 |
| Ստանարիս | Եղիշիս | 133. Համբարձում Սարգսիճեան |
| 85. Ալեքսան Պէլիբեան | 113. Յակոբ Խիթիանեան | Բ. 134 |
| 86. Աեօփա Քոչընեան | Մանճրլիս | Ատանա |
| 87. Եղիշեան Մելիքեան | 114. | 135 |
| 88. Միսոս Ճափնաֆեան | Հանճըն | Սըղիկ |
| 89. Յակոբ Քաղապետեան | 115. | 136. Մատթէոս Ալիքսանեան |
| 90. Յակոբ Ամասեան | Երզնկա և Բարերոյ | Բ. 137. Լ. Պոփոկ Պարեօզեան |
| 91. Նազարէթ Շահապետ | 116. | Բ. Պ 138. |
| 92. | Թէքլիստոյ | Մարտիրոս |
| 93. | 117. Տիգրան Գ. Ալեանեան | Բ. Պ 139. |
| 94. | Կեօնարիս | Իզմիր |
| 95. Արաքել Ալթուն Տիրբի | 118. Մատթէոս Մ. Ալապետեան | Բ. Պ 140. |
| 96. Խաչատուր Պ. Միտրեան | Խարրերոյ | Եղիպատոս |
| 97. Ուլթէոս Պէլիբեան | 119. Յովհաննէս Կաղանեան | |
| 98. Սարգիս Արապետեան | Պարթևիս | |
| 99. Սարգիս Արթուրեան | 120. Յովհաննէս Տոփակիճեան | |
| 100. Արմեն Միքայէլեան | | |

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Վերստիկեանի Ստանարիոսեան. — Յարութիւն Վիճարեանեան Բ. յոյուստոյ որ պարտակէ բարակեան մատակարարեան տրամադրութիւններն :



ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ստեփան Բայրապետ ժամն 7 1/2 ին ի ներկայութեան 38 երեսօտանաց, որոց վերջին թիւն 47 ի յանդեպա :

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն անձնական տիրութեան սրտածառա բացակայ մը նալու ստիպուած ըլլալուն, ներկայ եկեղեցական Երեսօտաններէն Տ. Մատթէոս Սրբազան փոխանորդաբար նախագահեց այսօրեան նստին :

4

Բնդուներութիւն ատենագրութեան նախընթաց նստին :

Ստեփան Բայրապետ փաշտան նախընթաց է. նստի ատենագրութեան վրայ ի ղիտողութիւն հրաւիրեց երեսօտանները :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Երես 119 սիւնակ Ա. իմ խօսքիս սա մասը՝ « որ և է սոց մը ապստամբութիւն է » սխալ ըլլայ՝ « որ և է ապստամբութեան մէջ ևն » :

Բնագրութեան մէջ ևն : Երես 120 սիւնակ Ա. խօսքիս սա մասը « Հարկաւ Վարչութիւնն արտաքոյ կարգի ստանալէ մը ստիպուած և խնդիրը հոս բերած է » սխալ ըլլայ՝ « Հարկաւ Վարչութիւնն տրամադրութեան մէջ ևն » : Երես 120 սիւնակ Ա. խօսքիս սա մասը « որ և է սոց մը ապստամբութիւն է » սխալ ըլլայ՝ « որ և է ապստամբութեան մէջ ևն » :

Երես 120 սիւնակ Ա. խօսքիս սա մասը « Հարկաւ Վարչութիւնն արտաքոյ կարգի ստանալէ մը ստիպուած և խնդիրը հոս բերած է » սխալ ըլլայ՝ « Հարկաւ Վարչութիւնն տրամադրութեան մէջ ևն » :

Երես 120 սիւնակ Ա. խօսքիս սա մասը « որ և է սոց մը ապստամբութիւն է » սխալ ըլլայ՝ « որ և է ապստամբութեան մէջ ևն » :

խօսքիս յաջորդ մասին մէջ կ'ստիպեմ բարձր դիմաւ պիտի ըլլայ : Եւ վերջին մասը պիտի ըլլայ. « Արոնք թերեւս այդ բերուած խնդիրը ստորգննելու յուզեալ սրտերը հանգարտեցնեն » :

Երես 121 սիւնակ Ա. սա խօսքիս թէ « Հաճեցէք Ատենապետ Փաշա, խնդիրը բացատրել » պիտի կցուի : « Ար զխոնար թէ ի՞նչ է այն արտաքայ կարգի պատճառն, որոյ համար ժողովուրդը յուզուեր է » :

Նոյն երես սիւնակ Բ. Ատաջին անդամի խօսքիս՝ « Ժողովուրդը հանգարտեցնելու համար » մասին պիտի կցուի. « Եւ ի՞նչ են իւր ձեռք առած բարոյական միջոցներն, որ ստառած ըլլան » :

Երես 122 սիւնակ Ա. խօսքիս վերջը պիտի կցուի. « Այսան զի շնորհակալ բաներնուս համար որեւէ քուէ չհնք կրնար տալ » :

Արիւ զխոտողութիւն ընող չըլլալով Ատենապետութիւնը քուէի զրուեցաւ և ԲՆԻՈՒՆՈՒՆ ԾԱԽ Ժողովէն :

2.

Բացակայութիւն

Ատենապետ Փաշան ծանուցանելով ժողովին թէ Ազգային Երեսօրհաններէն՝

- Տ. Կարապետ Եսլիս. Սերոբեան
- Տ. Ներսէս Արշալու. Ասլանեան
- Տ. Արթուրակէս Բենյ. Մամբրեան
- Տ. Խորէն » Փէշիպանեան
- Տ. Պաշա Է. Փոփազեան

անձնական, տիրութեան պատճառաւ, և

Մկրտիչ Էֆէնտի Եսայեան ճանապարհորդութեան պատճառաւ այս աւուր նախին բացակայ մնալու ստիպուած ըլլալին յայտնած են, իշխանակել տուաւ ներկայութեան տուժարին մէջ :

3.

Հրաժարական

Ատենապետ փաշան նոյնպէս ծանուցանելով

ըզ թէ ազգային երեսօրհաններէն Արաբիչիւր, տանեան Տիգրան Էֆէնտի անձնական զրազմանց պատճառաւ հրաժարական գրեած է Երեսօրհանութենէ, կարգաց հրաժարագիրը, և երեսօրհաններն ի զխոտողութիւն հրաժարելէ ետեւ տեսնելով որ զխոտողութիւն ընող չկայ, քուէի զրուեցաւ, որ ընդունուեցաւ Ժողովէն :

4.

Առաջարկութիւն Գափաճեան Էֆ. Ի :

Ատենապետ փաշան ազգային Երեսօրհան Գափաճեան Մինաս Էֆէնտի կողմէն Ղիւտանին մատուցուած գրաւոր առաջարկութիւնը ներկայացնելով, կարգաց զայն, որ է

Վսեմաշուք Ատենապետ փաշա Ազգային ժողովոյ.

Սահմանադրութեան մէջ Պատրիարք զըլլային Կրդ յօդուածն՝ որ կը տրամադրէ այսպէս՝ « Ընդհանուր Ժողովը հրաժարանայ գիր կուղարկէ Պատրիարք ընտրուած անձին, բանի մը անձանց ձեռքը՝ եթէ Ա. Պօլսոյ մէջ է, և յատուկ հրաժարակաւ, եթէ Ա. Պօլսն զուրտ տեղ է : Նորընտիր Պատրիարքն այս հրաժարանայ գիրն առնելով՝ Պատրիարքարան կուզայ են » , աւելորդ, մանուսնող խիստ անյարմար է իրրե օրէնք. հետեւաբար թէ՛ սասր և թէ՛ այս առաջին զլլային մէջ սասր նման աւելորդ և անպէտ տրամադրութեանց բարձու մը կառաջարկեմ :

13 Օգոստոս 76 Ա. զգ. Երեսօրհան Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահա ասիկա առաջարկութիւն մը՝ որ օրինական տրամադրութեանց կ'վերաբերի, ըստ կանոնի կը յղուէր զայն մեր Նախաձեռնութեան Ղիւտանին՝ որպէս զի տեղեկագրէ մեզ թէ նկատառութեան արժանի է թէ ոչ :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՅ. — Առաջարկութեան տէրը կըսէ թէ սասր նման աւելորդ տրամադրութիւններ կան. բայց որո՞նք են այդ աւելորդ

տրամադրութիւնները՝ չցուցնէր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ մեզ չվերաբերիր, առնական կանոնին կտրամադրէ թէ որեւէ առաջարկութիւն որ գրով Ղիւտանին կ'յանձնուի, ժողովին կարգացուելէ ետեւ Ղիւտանին կողմէն նախաքննութեան յղուի, որպէս զի սնոր կարծիքն առնելէ ետքը ժողովն պէտք եղածը անօրինէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՅ. — Ես կարծեմ թէ ըստ կանոնի Ժողովոյ կատարելու առնուլ պէտք է նախ թէ արդեօր կուզէ՞ Նախաձեռնութեան Ղիւտանին յղել կամ ոչ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովը դեռ անտեղեկ խնդրոյն ինչ ըլլալուն, չկրնար մէկէն ի մէկ որոշել թէ նկատման արժանի է կամ ոչ, սասր համար Նախաքննիչ Ղիւտանին կ'յղէ և սնոր կարծիքը կ'առնու : Այս է կանոնը. զուրով այն կէտին թէ ս'վ պիտի գրկէ տեղեկագիրը Նախաքննութեան, կանոնը Ատենապետին կը յանձնէ այդ գործողութիւնը. բայց ևս առնականութեան ամբարտաւանութիւն և պահանջում չուճ չուճիմ, ժողովն ինչպէս որ ուղէ՛ այնպէս կընեն :

ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՅ. — Կանոնագրին 19րդ յօդուածը կարգացէր. հան յղման վերաբերեալ պարբերութիւններ կան, և ըստուած է թէ ժողովը կարտասանէ յղումներն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովին բերանն համարուելու սրտիւ ունի առնական, անոր համար այդպէս ըսուած է :

ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՅ. — Ես այնպէս չեմ հասկնար. Ժողովին արտասանած յղումներն ըսելով կանոնը յատկապէս ըսել կուզէ որ Ժողովը պիտի որոշէ յղել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կանոնը ըսել կուզէ թէ Ատենապետը յանուն Ժողովին կ'յղէ : Կատուցեմ, Փափազեան Էֆէնտի, չարժէր որ վերաքննութիւնն երկարի այսպիսի խնդրոյ մը վերայ. կանոնը շատ աղէկ տրամադրած է այս կէտը. կանոնը չներէր որ որեւէ առաջարկութիւն միանգամ ժողովին կարգացուելով անմիջապէս մերժուի կամ ընդունուի. այլ տրամաբանօրէն տրամադրած է որ նախաքննիչ Ղիւտանին յղուի, և նա ցուցնէ Ժողովին՝ նկատ

առնական արժանի է կամ մերժման և կամ օրոձգման. և որովհետեւ առնական ինչպէս ըսի, Ժողովին բերանը կ'համարուի, նա կ'յղէ յանուն Ժողովին, ինչպէս որ ՅԱրդ յօդուածը բացարձակապէս կարտամադրէ սաի :

Գոցներ այս միջադէպը, և անցնինք որիչ խնդրոյ :

5.

Հարցում Փափազեան Էֆէնտիին :

ԱՓԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Թէ և գրաւոր հարցում մը կայ Փափազեան Էֆէնտի կողմէն Ղիւտանին յանձնուած, որ առ Արշալուսեան խոտն ժողովն ուղղեալ է, սակայն տակաւին Արշալուսեան անդամներէն ներկայացող չըլլալուն՝ հարկ կըլլայ սպասել անոնց գալուսեան, և առ այժմ անցնիլ մեր Օրակարգին :

ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՅ. — Այս բանի անգամ է որ կը պատահի, հարցում կըլլայ Արշալուսեան և կըտուի թէ հաս չէ որ պատասխանէ. պէտք է որ Արշալուսեան կողմէն ժողովին մէջ պատասխանողը ներկայ ըլլայ միշտ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը յիշէր արդէն որ առաջին օրէն նորընտիր Քաղաքական ժողովն խնդրեցինք որ ժողովիս մէջ իրեն ներկայացուցին ունենայ միշտ. խոտացաւ, բայց այսօր Քաղաքական ժողովն նիստ կընէ եզեր. մայր գրկեցի որ ժողովի հրամայեն, պատասխան գրուած կեն թէ ստիպողական գործ ունին և մէկ բառորդէն կուզան : Անոր համար ըսի թէ այդ հարցումն ետրի թողլով՝ անցնինք մեր Օրակարգին :

ՕՐԱԿԱՐԳ

Վերաքննութիւն Սահմանադրութեան. — Չարականութիւն վիճարանութեան բաղական մատակարարութեան տրամադրութեանց :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օրակարգնիս՝ ինչպէս որ գրուէր, թագական մատակարարութեան տրամադրութեանց վիճարանութեան շարունակ

կուսիսն է . մեք Ռուսիսեան Էֆէնտիի ծրագրին մինչև ճիշտ յօդուածը հանդերձ սրբազրութեամբ ընդունեցինք . այժմ Դրդ յօդուածին պիտի անցնինք , որ է՝

Յօդ . 7— Ոչ սր ընտրեալ է առաջին քուէարկութեամբ եթէ շատանայ քուէարկուայ թիւին կէսէն աւելի քուէ՝ երբոր ընտրողաց մեծամասնութիւնը քուէի մասնակցած է :

Իսկ երկրորդ քուէարկութեան մէջ համեմատական առաւելութիւնը կրուէ : — Ամենայն քուէարկութիւն առաջին թէ երկրորդական՝ որում ընտրողաց քառորդը գտնէ չէ մասնակցած իրրե անբաւական անդաւեր է և կրկնել կը հարկաւորի :

Փաղական ժողով մը պիտի ընտրուի թողնուցմէ . ընտրողները գիտենք արդէն թէ ո՞չք պիտի ըլլան , վասն զի մեք անոնց հանդամանքն սրտեցինք . առաջին քուէարկութեան մէջ ընտրութիւնը բացարձակ առաւելութեամբ պիտի ըլլայ և երկրորդին մէջ համեմատական . ասոր ալ ընտերացեալ ենք Սահմանադրութենէն , սակայն առաջին քուէարկութեան համար ո՛չ սր ընտրեալ է եթէ չ'ստանայ քուէարկուայ թիւին կէսէն աւելի քուէ , եթէ ընտրողաց մեծամասնութիւնն մասնակցած է , կրուէ յօդուածին առաջին պարբերութիւնը . իսկ երկրորդ պարբերութեան մէջ , ամենայն քուէարկութեան , ստաշինք երկրորդական՝ որում ընտրողաց գտնէ քառորդը չէ մասնակցած , իրրե անբաւական անվաւեր է և կրկնել կ'հարկաւորի , ասի ինձ հակառակութիւն կը թուի : Այս կէտն պէտք է նախ բացատրուի և ապա կը մնայ մեզ վիճարանութեան ենթարկել օրինական սկզբունքը թէ ա քուէարկութեան թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ անգամին օրինաւորութեան համար ընտրողաց սցարանին կամ այնքանին մասնակցութիւնը հարկաւոր է թէ ո՛չ . այս կէտը Սահմանադրութեան տրամադրածէն տարբեր է , ուստի պէտք է ուշի ուշով նկատուի և վիճարանութեամբ որոշուի :

ՃԱՅՃԱՅԵԱՆ Մ. ԷՅ . — Կը խնդրեմ Աստուծոյ փաշա , անդամ մ'ալ բացատրելիք յօդուածին ինչ ըլլալը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Իւրարանջիւր որ խնդրին արդէն իմաստաւորած է և հասկցած

կարծեմ . նորէն բացատրելու հարկ չեմ տեսնար : Ով որ գիտողութիւն ունի՝ պէտք է խօսի : ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ . — Ամենքս հասկցած ենք , ճամփաֆեան Էֆէնտին ալ հասկցած է . բայց թէ որ անդամ մը ծրագրին հեղինակը բացատրէ աղէկ կրնայ :

ՌՌՍԻՆԵԱՆ ԷՅ . — Թէ որ բացատրութեան պէտք կը տեսնուի , սրտաբառ եմ խօսիլ : Չայներ . — Հարկ չիտայ :

Տ. ՄԱՏԹԷՆՍ ԵՊԻՍ . — Քուէարկութիւնը ժողովոյ մը սրտման նման գործողութիւն մ'է . որե իցէ թիւէ բողոքացեալ ժողովոյ մը երբ կէսէն մէկ աւելին ներկայ է , օրինաւոր կրնայ . օրինակի համար՝ եթէ 14 անդամէ բողոքացեալ Քաղ . ժողով ունինք , երբ անոր անդամաց Տը ներկայ են՝ նիստերնին օրինաւոր կրնայ : Հիմա կոտաջարկուի որ եթէ 200 ընտրող կայ թաղի մը մէջ , գտնէ 130ը քուէարկութեան մասնակցելու է , որպէս զի անոր կէսէն աւելին մեծամասնութիւն համարուի . . .

ՌՌՍԻՆԵԱՆ ԷՅ . — [Լեղմիշևամբ] Ոչ , այնպէս չէ . եթէ ընտրողաց թիւն 200 է , 101ը բաւական է :

Տ. ՄԱՏԹԷՆՍ ԵՊԻՍ . — Եստ ըստ , ասի այնպիսի պայման մ'է , որ բոլոր թաղերուն , մասնաւոր դաւառներուն մէջ քուէարկութիւն չկրնար կատարելու ճամբայ կը բանայ : Ես իրր վերաբննիչ յանձնախմբի տեղեկարար կառաջարկեմ որ քուէարկութեան մասին Սահմանադրութեան մէջ եղած տրամադրութիւններն անփոփոխ մնան , դեռ թիչերը հասկցած են քուէարկութեան և ընտրողութեան ինչ ըլլալը . պիտի դայ որ մը անշուշտ՝ որ ընտրողաց ամենն ալ պիտի մասնակցին քուէարկութեան . բայց այսօր այդ յօդուածին ուժով քուէարկութեան բոլորովին պիտի գրկուին իրենց իրաւունքէն . ուստի պէտք է որ այդ յօդուածը փոխուի և առ այժմ Սահմանադրութեան մէջ գտնուած տրամադրութիւնըն ինչպէս որ է՝ այնպէս մնայ : Միանդամայն հարցում մ'ունիմ ծրագրի Հեղինակին . եկեղեցականաց ընտրութիւնն ինչպէս պիտի լինի և ո՞վ պիտի կատարէ : Այս կէտը բացատրուած չէ :

ՌՌՍԻՆԵԱՆ ԷՅ . — [Պատասխանելով] Ժողովուրդը :

Տ. ՄԱՏԹԷՆՍ ԵՊԻՍ . — Կրր կարգն այդ կէտին գայ , խօսք ունիմ դարձեալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Լսեցիր Մատթէոս Սրբազանին գիտողութիւնը . և ըստ սրում արիչ խօսք ուզող չիտայ , կարտաւորիմ քուէի ենթարկել , բայց կէտ մը կայ , զոր քուէարկութենէ առաջ կը փախարկիմ որ ուշադրութեան տանուք :

Չայներ . — Գեա մեծամասնութիւն չիտայ քուէարկելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Աղղային Ժողովոյ որոշման ենթարկեալ խնդրոյն համար , եթէ միանգամ ժողովն օրինաւոր թիւ չունենալով անկարող ըլլայ քուէարկելու , հետեւեալ նիստին միեւնոյն խնդրոյն օրակարգին մէջ ըլլալէն ետքը , սրեւէ թիւ երեսօթխանաց բաւական է դայն ըսծել կրուէ մեր կանոնադրութիւնը : Ռուսի մեք այսօր այս խնդրոյն վրայ ամենայն ինչ կրնանք որոշել ստիպոյն կարօտութիւն չունինք անապարելու . առ այժմ 42 երեսօթխան ներկայ ենք . յուսամ թէ շուտով օրինաւոր ներկայութիւն անդամաց կը յաջողինք ունենալ :

Ըսի թէ կէտ մը կայ՝ որ պէտք չէ ուշադրութենէ վրիպի , վիճարանութեան ենթարկեալ Դրդ յօդուածին երկու պարբերութիւններն մէկ կէտի նկատմամբ իրարու հակընդդէմ կերելին . առաջին պարբերութեան մէջ կրուէ թէ ընտրեալ չէ՝ այն՝ եթէ առաջին քուէարկութեան մէջ քուէարկուայ թիւին կէսէն աւելի քուէ շատանայ՝ երբ ընտրողաց մեծամասնութիւնը քուէի մասնակցած է : Իսկ երկրորդին մէջ կրուէ թէ ամենայն քուէարկութիւն՝ սրում ընտրողաց քառորդը գտնէ չէ մասնակցած , իրրե անբաւական անվաւեր է և կրկնելի : Այստեղ մեծամասնութեան համար ընտրողաց քառորդը կարահանջուի որ եթէ բաւական է քուէարկութիւնը վաւերական համարելու , ըսել է ընտրողաց մեծամասնութեան մասնակցելու հարկ չմնար . ինչպէս առաջին պարբերութիւնը սրահանջել կը նկատուի ինձ կերեւայ թէ այս երկրորդ պարբերութեամբ առաջինը կը ընջուի :

ՌՌՍԻՆԵԱՆ ԷՅ . — Ընդհակառակն կը հաստատուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ռրեմն կարգեմ , Ռուսիսեան Էֆէնտի . շնորհ ըրէք բացատրել այդ կէտն :

ՌՌՍԻՆԵԱՆ ԷՅ . — Ասոր բացատրութիւնը խօստ պարզ է . կը ցուցիմ որ երեսօթխան Էֆէնտիններէն ամանք խնդրելու ըստ չեն սերտած . ժողովի մը քուէարկութիւնն այլ է , ժողովրդի մը քուէարկութիւնն այլ է . իրաւ սկզբունքով մէկ են , բայց կանոններով կատարելին և իրաւութեան հետ չեն համեմատուիր : Ամեն երկրի մէջ ժողովրդական քուէարկութիւններն երկու անգամով կ'կատարուին առաջին և երկրորդ քուէարկութեամբ , մինչդեռ ժողովոյ մէջ երկու անգամ քուէարկութիւն չիտայ , այլ մէկ դարձ քուէարկութիւնը բաւական է խնդրին որոշելու . իսկ ժողովրդական քուէարկութեան մէջ ըստ սրում ամենը միշտ հան չեն , առաջին անգամին բացարձակ առաւելութիւն կրնաուուի , և կրնայ ըլլալ որ երկրորդ քուէարկութեան հարկ մնայ , այն ատեն քուէարկութիւնը չընդարձակելու համար համեմատական առաւելութեան միջոցն ընտրուած է . իսկ ի՞նչ բանի վրայ հիմնելու է քուէարկութեան վաւերականութիւնը , միթէ 2 կամ 3 քուէ ալ գտն նէ պիտի ընդունուին՝ հարկաւ ո՛չ , անմիտ կամ անբան օրէնք մը չը հաստատուու համար ընտրողաց քառորդը գտնէ մասնակցի բաւած է երկրորդ պարբերութեան մէջ : Ասոր համար է որ ամեն երկրի մէջ ժողովրդական քուէարկութիւնն երկու անգամ կրնայ , առաջինը բացարձակ և երկրորդը համեմատական , որ թէ և իրարու նոյն և նման չեն , բայց դարձեալ հիման մը վրայ հաստատուած են . և ինչպէս ըսի՝ անմիտ օրէնք մը չընելու համար մեր ծրագրին մէջ ալ այդպիսի հիմ մը գրուած է : Ժողովրդական քուէարկութեան մէջ երբ առաջին քուէարկութեամբ չըմնայ և համեմատական ին մնայ , ետքի մնացածներուն վրայ ըլլայ ըսելու քուէարկութիւնը շտարածուիր ըսել է . բայց թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ քուէարկութեան մէջ թիւ մը կայ որ հիմ պէտք է բանուի , և այս թիւն է ընտրողաց քառորդն՝ որ Կրտաբացուայ սահմանադրութեան մէջ կայ , իսկ մեր Սահմա-

նապրութեան մէջ չկայ : Օրէնքին անձամբեան արդիւնքն տակէ առաջ բանի մը անդամ տեւորւած եցաւ , օրինակի համար 300 ընտրող անկեցող թաղէ մը 12 կամ 7 բուկով ընտրուած երեսփոխան եկաւ մեր մէջ . այս պարագայներուն ոչմի անձնելու համար ըսած ենք որ ընտրողաց գոնէ բաւորազը մասնակցի . առաջին բուկարիութեան մէջ չենք փնտրուեր բաւորազն՝ անոր համար որ մեծամասնութիւնը մասնակցած ըլլայ . ըսել է թէ առաջինին մէջ տեղի խիստ և անաշտ է օրէնքն , իսկ երկրորդին մէջ բաւորազ ըսւած է . անմիտ օրէնք մը չգրուելու համար է որ կարծեցի թէ երկրորդ պարբերութեան մէջ պէտք է այդ կէտը դնել : Ա՛հա այսրան բացատրութիւն բաւական կհամարիմ այս մասին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ռուսինեան էֆէնտի առ Ատենապետ փաշան տուած պատասխանը գոհացուցիչ չդատայ . ծրագրին մէջ գրուուած այդ հակառական խնտոր չշտիւեցաւ . կշուտամ որ հետզհետէ հասկնալով կշտիւտի , և խմբողիւն այ՛ որ Ռուսինեան էֆէնտին է , կը պարտաւորի այնպիսի բաւեր գործածել , որ օրէնքին տրամադրութիւնը սխալ չմեկնուի ապագային մէջ :

Օրէնքն ըստ սրում ժողովրդին համար կը շինուի , պէտք է ժողովրդին հանգամանքը նըկատուութեան անուշ և անոր համեմատ շինել . ինչ օգուտ այն օրէնքին՝ որ գեղեցիկ սկզբունքներ ունի , սակայն անգործողութի է : Կեր Սահմանադրութեան խմբողիւններն աղէկ արամողրած են ժողովրդին բուկարիութեան վերաբերեալ յօդուածները . ըսեր են որ բուկարիութենէն 8 օր առաջ ծանուցուի ընտրողաց . և թէ ընտրողաց և թէ ընտրելուաց ցանկերը կտրուին ի անս ամենուն , և դատարաններ եթէ կան . ընդունուին և որոշեալ օրը ընտրողը հրաւիրուին ի բուկարիութիւն . և որոշեալ ժամին ետեւ եկած բուկն չընդունուի : Այս կերպով ժողովրդեան սահմանադրական իրաւունքն անբնարարելի պահուած է . իսկ թէ որ ժողովուրդը չգործադրէ իւր իրաւունքը , ատոր դէմ բանի միջոց մը չէ տրամադրած , այլ միայն բողոքելու իրաւունքն զրկուած է : Իսկ արդի ծրագրին մէջ կը տրամադրուի որ ընտրողաց գոնէ

բաւորազը մասնակցի . և երբ չմասնակցի՝ բուկարիութիւնը անբաւական համարուի . բաց յետոյ ինչ բնել պէտք է՝ այդ չէ ըսեր . պէտք է որ այս կէտն ալ նախատեսուած ըլլար ծրագրին մէջ , որպէս զի վերափոխ անմիտ օրէնք մը ընդունած չըլլանք , ինչպէս ընդունած ենք և զի Սահմանադրութեան մէջ , որուն խմբողիւններէն մէկն էր նաեւ . Ռուսինեան էֆէնտի : Կրք ժողովուրդն Ս. Բ. և Գ. բուկարիութեան չմասնակցի , ինչ պիտի ընենք . մի՞թէ ժամկոչ դրոշմով բուկ տուր պիտի ըսենք . այս կերպով բանի բուկ աւելուիլը տեսնուած բան չէ . այս ծրագրին ընդունելու և փորձով տեսնելու է թէ գործողութի է թէ ոչ : Ըստ իս բաւական է ինչ միջոց որ ցուցրեր է Սահմանադրութիւնը ժողովուրդն ի բուկարիութիւն յորդորելու համար . բուկարիութեան օրն ու ժամը և այլ պարագայները կանխաւ ծանուցանել , և որոշեալ ժամին ետքը եթէ բուկ դայ կամ բողոքող գրուուի , չընդունել այդ բուկն կամ բողոքը : Աստուկով ժողովուրդն ինքիւն և ստանց իւր ետեւէն մէկն կշտուու կտանարուի իւր բուկն տարու : Ասոր փորձն ալ տեսանք . անոնք՝ որ առաջ անտարբեր կեցան և տեսան որ գոյցած բուկները բաւական համարուելով իրենց չուզած մտրդիլը ընտրուեցան , ետքի անդամին փութային իրենց բուկները տարու : Ժողովուրդն ընտելուցաւ բիշ շատ և պիտի ընտրուանայ հետզհետէ : Օրէնքին գործադրութեանը :

Այդ , դալով ծրագրին այն կէտին՝ որ կըսէ թէ առաջին և երկրորդ բուկարիութեան մէջ և թէ ընտրողաց բաւորազ մասը գոնէ չմասնակցի ընտրութիւնն անբաւական և անվաւեր համարուի . ըսի և դարձեալ կըսեմ թէ դարման մը ցուցուած չէ թէ ինչ բնել պէտք է ասանկ պարագայի մը մէջ . եթէ դարմանը ցուցուած ըլլար , պիտի ըսէի որ նախատեսուած է . . .

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — [Բեղմիջմար] Գարմանը դաք առաջարկեցէք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ . ծրագրին տէրը դաք էք . սասի և դաք ըսելու էք դարմանը , որպէս զի անմիտ օրէնք մը ընդունած չըլլանք :

ԱՅԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Իսկ դաք ինչ կա

առաջարկէք այդ մասին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես դարման առաջարկելու պարտաւոր չեմ : Ես սա՛ կըսեմ . Ատենապետ փաշա , որ երբ դաք այն ժողովին մէջ խնդիր մը բուկի ենթարկէք , և Չ հոգի ընդդէմ Աի ձեռք վերցնէ , ու Մնացեալ ժողովուրդն ձեռնարկ ըլլան , ո՛չ տարբէն կընդունէիք այն բուկն , և կըսէք « Ժողովն որոշեց այսպէս կամ այնպէս » : Երբ ես ձեռնարկ ըլլամ և բուկ չտամ , չտուած ատենս ինձմէ բանի բուկ կընա՛ք ուղի . ըսել է ձեռնարկութեան իրաւունք ալ կայ որ միշտ կյարդուի . այս իրաւունքը պէտք է ընդունինք նաեւ թաղերուն համար , բանի որ հոս ընդունած ենք : Ինչ իրաւամբ թաղային ընտրողաց բանի բուկ տուր պիտի ըսենք , և շատերուն բուկարիութեան չըմասնակցելուն համար՝ իրենց իրաւունքը ձանձուցող և դարձադրու մասին կատարած ընտրութիւնն անընդունելի և անվաւեր պիտի համարինք : Պիտի պէտք է նաեւ թէ այսուհետեւ թաղային ընտրութեան իրաւունք պիտի ունենան անոնք որ թաղային ուղղակի տրոց կը մասնակցին . հետեւաբար պիտի գտնուին ընտրողներ որ կարծեալով թէ երբ բուկ չաան , տուրք տալ ալ տղատ պիտի համարուին , ինչպէս երեսփոխանական ընտրութեանց մէջ տեսնուած է , թաղային ընտրութեանց ալ չմասնակցիլ սխալի մտարբերն . մինչդեռ ասկէ առաջ թաղային ընտրութեանց համար տոակի իտար չըլլալով , բաւական ընտրողք բուկի կը մասնակցիին : Ասով ոչ միայն թաղային ընտրութիւնը դժուարութեանց պիտի հանդիպին և ետ պիտի Ման , այլ և մեր այս ժողովին մէջ պահած երեսփոխանաց տեղ ուրիշներ չպիտի կրնան գալ ընտրութիւնը չյաջողելով : Այս պարագաները նըկատելով կըսեմ թէ այնպիսի հիման վրայ դնելու ենք օրէնքն՝ որ կարելի լինի գործադրել :

ԱՅԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այսպիսեան մը առաջ այս յօդուածին երկու պարբերութեան մէջ հակասութիւն մը նշմարելի և ժողովին յայտնելի . որ նախ այն բացատրուի , և ապա խնդրոյն օրինական կէտը վիճարանուի . դիցուք թէ թաղի մը ընտրողաց թիւը հորիւր է , և առաջին բուկարիութեան մէջ 100 կն 51 ը պէտք է մաս

նակցի որպէս զի ընտրութիւնն օրինաւոր համարուի . իսկ երկրորդ բուկարիութեան մէջ բաւորազին մասնակցութիւնը բաւական կհամարուի այս է հակընդդիմութիւնը : Ինձ համար բաւական է առաջին պարբերութեան մէջէն վերցնել այն կտորը , կամ ետքինը փոխել :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Կարծեմ թէ տարաբաւան սխալ մը սարքուած է :

ԱՅԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ո՛րն է սխալը :

Զայս ըսելով Ատենապետ փաշան կարդաց յօդուածին առաջին պարբերութիւնը , որ է

Յօդ . 7 — Ոչ որ ընտրեալ է առաջին բուկարիութեամբ , եթէ չտանայ բուկարիուաց թիւէին կէտէն աւալի բուկ՝ երբոր ընտրողաց մեծամասնութիւնը բուկի մասնակցած է :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Այդ կտորը պակասաւոր է տարագրութեան մէջ :

Իսկ երկրորդ բուկարիութեան մէջ համեմատական առաւելութիւնը կրուէ : — Ամենայն բուկարիութիւն առաջին թէ երկրորդական՝ ուրում ընտրողաց բաւորազը գոնէ չէ մասնակցաց իջրեւ անբաւական անվաւեր է և կրկնել կը հարկաւորի :

ԱՅԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — [Երկրորդ պարբերութիւնն ալ կարդալ ետեւ] Ուրեմն երկու տեսակ մեծամասնութիւն կը փնտռուի . այս շիտթը փառասելու համար կարծեմ լու կըլլայ ըսել պարզապէս թէ առաջին բուկարիութեան մէջ բացարձակ առաւելութիւն տուայողը կընտրուի , և երկրորդին համեմատական առաւելութիւնը կը բուկ . և որպէս զի թէ՛ առաջինին և թէ՛ երկրորդին բաւական թուով ընտրողք մասնակցին բուկարիութեանց , կարծեմ բաւ է տրամադրել թէ « Բուկտուփը կըրեալ պատրաստ մնայ ընտրողաց բուկներն ընդունելու ո՛չ մէկ կամ երկու ժամ , ինչպէս կըլլար մինչև ցայժմ , այլ մէկ կամ երկու օր » և ապա բուկահամար կատարել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ բուկարիութեան

Թեան մը մէջ ընտրողաց քառորդը չմասնակցի, միւս անգամ ևս քուէարկութեան հրահրելու է ընտրողները :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ իմ առաջարկած սրբազրութիւնս ընդունելի չէք դատեր, և քուէին սրտհառանքը պահելու համար, կուզէք որ գէթ ընտրողաց քառորդը մասնակցի քուէարկութեան որպէս զի ընտրութիւնն վաւերական համարուի, այն ժամանակ սա պէս պէտք է սրբազրել 7րդ յօդուածը « Ո՛չ որ ընտրեալ է առանց քուէից բացարձակ առաւելութեան Ա. քուէարկութեան ժամանակ, և մնացորդաց ընտրութիւնը կը կատարուի համեմատական առաւելութեամբ Բ. քուէարկութեան միջոցաւ Սակայն որ և է ընտրութիւն վաւերական համարուելու համար, քուէարկութիւնն թէ՛ Ա. ըլլայ և թէ՛ Բ. պէտք է որ ընտրողաց գէթ մէկ քառորդն մասնակցած ըլլայ և եթէ ընտրողաց քառորդն սրտհա թուով քուէարկու գտնուի, քուէարկութիւնը թէ՛ Ա. ըլլայ և թէ՛ Բ. անվաւեր կը համարուի և պէտք է կրկնուի. բայց այն կրկնեալ քուէարկութեան ժամանակ, որ և իցէ թիւ քուէարկուաց բաւ է ընտրութիւնն օրինաւոր համարուելու :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այո՛, դործնական է այդ. ևս ալ կը ձայնակցիմ այդ առաջարկութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես առաջարկութիւն չեմ ուզեր ընել. իմ միտքս սրբազրելու հարկ ըլլալը ծանուցանել է ժողովին :

ՄԵՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — [Յօդուածին առաջին սրբաբերութիւնը կարդալէ ետև] ըսել է որ եթէ թաղի մը ընտրողաց թիւն 200 է, 51 քուէ շատնուն ընտրեալ չէ :

[Սրկիտայ սրբաբերութիւնն ալ կարդալէ ետև] ըսել է որ դարձեալ թաղի մը ընտրողաց թիւն 200 սեպելով՝ երբ ասոնցմէ 50 ը մասնակցած է, կը բաւէ : Ահա այս է մեզ շիտիտըն, կարծեմ թէ երկու բաւ եթէ վերցունենք կլմնայ. այսինքն՝ եթէ ըսենք սամեւայն քուէարկութիւն՝ որում ընտրողաց քառորդը գտնէ չէ մասնակցաց, կրկնելի է :

Իմ առաջարկութիւնս վարի չորս տողը բողբոլին վերցնել է :

ԻՌԹԻՒՆՃԱՆՆ Կ. ԷՖ. — 50 ընտրողը 31 քուէ չկրնար տալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահա ասիկ իմ ըսած սրբազրութիւնս. [և կարդաց հետևեալը]

« Ո՛չ որ ընտրեալ է առաջին քուէարկութեան եթէ չստանայ քուէարկուաց թիւնն կէսէն մէկ տեղի քուէ. իսկ երկրորդ քուէարկութեան մէջ համեմատական առաւելութիւնը կը բաւէ :

« Ամենայն քուէարկութիւն թէ՛ առաջին և թէ՛ երկրորդական, որում ընտրողաց քառորդը գտնէ չէ մասնակցած, իբրև անբաւական անվաւեր է և պէտք է կրկնուի : Բայց այն [կրկնեալ] քուէարկութեան ժամանակ, որ և է թիւ քուէարկուաց կրուէ ընտրութիւնը վաւեր համարուելու համար թէ՛ առաջին քուէարկութիւն ըլլայ և թէ՛ երկրորդ » :

ՄԱՐԿՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Արդեօր առաջին անգամին ընտրողաց մեծամասնութիւն չպիտի փնտաուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երբ որ և է քուէարկութեան մէջ ընտրողաց գէթ քառորդ մասը անտարբերութեամբ մասնակցի չ'եղաւ, քուէարկութիւնն անվաւեր է ըսելով պիտի կրկնուի, բայց կրկնութեան ժամանակ քանի քուէ ալ դայ բաւական պիտի համարուի. և իրաւունքն ալ այս է կարծեմ :

ՄԵՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Եթէ առաջին քուէարկութեան մէջ ընտրողաց քառորդ մասը չմասնակցեցաւ, և ընտրութիւնն անբաւական համարուելով կրկնուեցաւ, միթէ այս կրկնութեան ժամանակ բացարձակ առաւելութիւն չպիտի փնտաուի :

Չայներ. — Անշուշտ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ուրիշ խօսք ուզող չկայ, կարդացած սրբազրութիւնս քուէի պիտի դնեմ. սրբազրութեանս առաջին մասը Սահմանադրութեան մէջ եղածին յարեմանն է, անիկայ քուէի ենթարկելու հարկ չ'կայ : Երկրորդ մասն է որ քուէի պիտի դնեմ. վասն զի անիկա Սահմանադրութեան մէջ չկայ և նոր է :

Չայս ըսելով Ստենապետ փաշան քուէի

դրաւ սրբազրութեան երկրորդ մասը, որ է :

« Ամենայն քուէարկութիւն թէ՛ առաջին և թէ՛ երկրորդական, որում ընտրողաց քառորդը գտնէ չէ մասնակցած, իբրև անբաւական անվաւեր է և պէտք է կրկնուի :

Ժողովն ընդունեց զայս միաձայն հաւանութեամբ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ղաներ այժմ սակէ ծագելիք հետեւանայ առաջն առնելու կէտին վրայ ալ խորհիլ. քուէարկութիւն մ'անվաւեր վճռելով կրկնելու սրտաւարեցանք. եթէ այն կրկնութեան ժամանակ դարձեալ ընտրողաց քառորդն չ'մասնակցի, ինչ պիտի ընենք. միթէ այն սարագայի մէջ իմ ըսածս օրինաւոր չէ՞ք դատեր. այսինքն կրկնեալ քուէարկութեան ժամանակ որ և է թիւ քուէարկուաց բաւական համարիլ ընտրութեան վաւերականութեան համար :

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Սիկա կարծեմ սղաղիկցընել է քուի դրութիւնը. այսինքն քանի մը քուէով ընտրեալներ ընդունիլ. եթէ հին դրութիւնը կանոնի մը տակ դնել է մեր միտքը, ամեն ընտրողի սրտքն է իւր քուէն տալ. . .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — [Բեղմիջամար] Պարտք չէ, իրաւունքն է :

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Ո՛չ. սրտքն է միանգամայն. վասն զի այն քուէին տակ դործ կայ տեսնելու : Իմ դիտողութիւնս սա է որ եթէ ազգին մէջ զանգատանայ անդի տուող հին վիճակին դարման տալ կուզենք այս նոր դրութեամբ, պէտք է որ երկրորդ սրբաբերութեան մէջ ընտրողաց քառորդ մասին մասնակցութիւնը միայն բաւական սեպուի և անիչ դուրս չըլլայ : Ուստի ևս կառաջարկեմ որ ընտրողաց քառորդ մասն անարտաձառ մասնակցած ըլլայ :

ՄԵՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Որ և է թիւ քուէարկուաց բաւական է ըսելու առնն եթէ թիւ մ'ալ սահմանենք և ըսենք թէ այս ինչ թիւէն սրտհան անընդունելի է, կարծեմ դժուարութեանց առջեւ առած կըլլանք : Ուստի կառաջարկեմ որ թիւ մը որոշուի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես այդ փոքրութիւ քուէով ընտրեալներուն դէմ գանդատողներէն չեմ, վասն զի այդ գանդատողները հիմ չունին, եթէ ժողովրդեան ընտրողական իրաւունքը

կատարուած ըլլար, եթէ ընտրութեանց ժամանակ հարկ եղած ծանուցումն ու ընտրողաց և ընտրելիաց ցանկերը կանխաւ սրտաբաւարած և ներկայուած չըլլան, այն առնն եղած դանգառը հիմ մը կուեննար : Պահ մ'առաջ ըսի թէ Սահմանադրութիւնը ժողովրդին ընտրելութեան համար իրթան մ'ալ դրած է ըսելով թէ որոշեալ ժամէն ետև եկած քուէներն ու բողոքները չեն ընդունուիր : Ասով ժողովուրդը հետզհետէ ընտելացաւ օրէնքին գործողութեան. հիմա օրէնք մ'ալ դնել կուզենք ըսելով որ եթէ ընտրողաց քառորդը չ'մասնակցի, ընտրութիւնն անվաւեր պիտի համարուի և պիտի կրկնուի. բայց եթէ կրկնութեան ժամանակ ալ ընտրողաց քառորդին մասնակցութիւնը չ'յաջողի, ինչ ընելու է. այս կէտն էր որ Ստենապետ փաշան բացատրեց և բարեփոխել տալ ուզեց : Սահմանադրութիւնն արդէն քուէարկութեան համար 8 օր առաջ ծանուցում տրամադրած է. երբ քուէարկութիւն մը անբաւական համարուի և կրկնել հարկ ըլլայ, 8 օր միջոց ևս պիտի տրուի, ընել է 16 օր շարունակ պիտի ծանուցուի. եթէ այս 16 աւուր միջոցէն ետև տլ ժողովուրդը դարձեալ անտարբերութեան մէջ գտնուի և իւր ընտրողական իրաւունքը չգործողի, ինչ ընել պէտք է : Ինծի կը թուի թէ իբր սրտաթրան մը ըսելու է. եթէ ըսենք որ ասանկ սրբազայի մը մէջ վարչութիւնը պէտք է ընտրել կամ ուրիշ թաղի մը յանձնել ընտրութիւնը, բան մը կը հասկնամ : Կամ որ և է անորոշ թուով ընտրութիւնը բաւական պէտք է համարիլ. կամ եթէ որ և է որոշեալ թուով ընտրութիւնը բաւական պիտի համարինք. այդ որոշեալ թուէն նուազ թուով ընտրութեան դէմ միջոց մը պէտք է սահմանել. ևս կըսեմ թէ այդ առաջարկութիւնը սղաղաբանողները սրտաթ մ'ալ պէտք է սահմանեն :

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Ինչ որ ևս պիտի ըսէի, նոյնը Փափաղեան էֆէնտի ինծմէ առաջ ըսուելը թաղ մը անտարբեր կը գտնուի իւր սրտքը կատարելու և իւր թաղ խորհուրդը չընտրէր, երկրորդ անգամէն ետև վարչութիւնը միջամտելու և ընտրութիւնն ինք կատարելու է. ասով ժողովուրդը կը դրոշուի սարագային իւր սրտք-

քը կատարել փութալու և անտարբերութեան գուռը կզուցուի . իմ նորատարն ալ ժողովուրդը փարձեցնել է իւր ընտրական պարտուց կատարման . ըսող կըսու թէ այդ իւր իրաւունքն է և ոչ պարտքը . բայց մէկ տեսութեամբ մը սրարտքըն ալ է , որովհետեւ իւր բուէն զընկալով ազգին գործերն ետ կ'մնան . ասոր համար երբ իւր պարտքը չկատարէ , վարչութիւնն ինք միջամտեալով իւր կողմէ Թագ. խորհուրդն ընտրելու է :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Թէպէտ և իմ առաջարկած միջոցն անբաւականութիւնն կատաճարկուի յայտնելով որ կրկնեալ քուէարկութեան ժամանակ կ'թէ ընտրողաց քառորդին անտարբեր մնալովք քուէարկութիւնը երրորդել հարկ ըլլար փոխանակ թագեցուց' վարչութիւնն ըլլայ ընտրող թագային . ժողովականաց ի սրտով ընտրողաց անտարբերութեան , և իմ սրարտուորութիւնս է քուէարկութեան զիմել և ժողովին ուրոշումը հասկնալ , սակայն հարկ կը համարիմ կանխաւ զեկուցանել ժողովին որ ամեն տեղ ընտրութեան մէջ վարչութեան այսպիսի իրաւունք տալն , նա մանաւանդ անոր որեւէ միջամտութենէն ու սղոյնցութենէն ազատ մնալու զգուշութիւն կրչայ , և մենք մեզնէն պիտի յանձնենք Վարչութեան այնպիսի արտօնութիւն մը որ կրնայ մասնաւոր սրարտուցայից մէջ անոր ձեռք զէնք մ'ըլլալ կարեւոր թաղերու ընտրողական իրաւունքը կատարելու եթէ շահ մ'ունենայ անկէ :

Այս պարագան ալ պէտք է ուշադրութեան առնուլ :

ՆՈՒՐԵԱՆ Յ . ԷՖ . — Անենապետ փաշային ըսածը թէ և իրաւացի է . ստոյգ է որ օրինական անտեղութիւն մը կայ այն սրարտուցին մէջ' որ վարչութեան միջամտութիւնը հարկաւոր կհասարակի թագային ընտրութեանց նը կատարման . վասն զի ամեն մարմին պէտք է որ իւր օրինաւոր ազդիւրէն գոյ և իւր սահմանին մէջ մնայ . սակայն ըստ որում թաղերն ալ շեն կրնար անխլանութեան մէջ մնալ , և ըստ որում յերկուց չարեաց փորրագոյնն է ընտրելի , ուստի աւելի աղէկ է թագ. խորհուրդի մը ընտրութիւնը յայտնուած վայրկեանին վարչութեան կողմէ մարմին մը գրուի թագին գործերը տեսնելու համար , քան թէ օրինական անտեղութեան զգուշամտութիւն մտօք թաղի մը գործերն անտէր թողուլ և լքանել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Մեր այս վիճարանութեան մէջ կ'մտնանք որ խնդիրն քուէարկութեան ընդհանուր օրէնք մը սահմանելուն մրայ է . որով պիտի ըլլան նաև երեսօտականական ընտրութիւնք :

Չայեկեր . — Ոչ ոչ . միայն թագային ընտրութեան մրայ է . երեսօտականական ընտրութեան համար զուցէ սրիչ կերպ մտածուի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Եթէ միայն թագահան ընտրութեանց համար է . ուրեմն ինչու այսչափ մտածումներ տեղի կունենան . ս'եր է վերաբնութեան էական սրայմանն համարուած փորձասութիւնը , ով ըսաւ թէ թաղերն 7 , 8 քուէով թաղական կրնարեն . թաղեր կան' որ 300 , 400 քուէով թագ. խորհուրդոյ ընտրութիւնը կատարուած են :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Եթէ միայն թագահան ընտրութեանց համար է . ուրեմն ինչու այսչափ մտածումներ տեղի կունենան . ս'եր է վերաբնութեան էական սրայմանն համարուած փորձասութիւնը , ով ըսաւ թէ թաղերն 7 , 8 քուէով թաղական կրնարեն . թաղեր կան' որ 300 , 400 քուէով թագ. խորհուրդոյ ընտրութիւնը կատարուած են :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Եթէ միայն թագահան ընտրութեանց համար է . ուրեմն ինչու այսչափ մտածումներ տեղի կունենան . ս'եր է վերաբնութեան էական սրայմանն համարուած փորձասութիւնը , ով ըսաւ թէ թաղերն 7 , 8 քուէով թաղական կրնարեն . թաղեր կան' որ 300 , 400 քուէով թագ. խորհուրդոյ ընտրութիւնը կատարուած են :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Եթէ միայն թագահան ընտրութեանց համար է . ուրեմն ինչու այսչափ մտածումներ տեղի կունենան . ս'եր է վերաբնութեան էական սրայմանն համարուած փորձասութիւնը , ով ըսաւ թէ թաղերն 7 , 8 քուէով թաղական կրնարեն . թաղեր կան' որ 300 , 400 քուէով թագ. խորհուրդոյ ընտրութիւնը կատարուած են :

[Միջնակք]

